

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ

2021թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել է 239 կմ ճանապարհների ձմեռային և 167.2 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 278.0 մլն. դրամ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում 147.8 կմ ձմեռային և 76 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 125.0 մլն. դրամ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

1. Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 98.0-կմ 101.4 հատվածի հիմնանորոգում (3.4կմ)- 600 մլն. դրամ: Կատարվել է աշխատանքների 50%-ը

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների կառուցման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ: Աշխատանքների ավարտը՝ 2022թ.:

2. Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 108.4 – կմ 126.1 հատվածի հիմնանորոգում (17.7կմ)- 3.000 մլն. դրամ :

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների եզրաքարերի տեղադրման, մայրերի կառուցման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ: Աշխատանքների ավարտը՝ 2022թ. :

3.Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 150.7-կմ 167.6 հատվածի հիմնանորոգում - 2 897 մլն. Դրամ:

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների երթևեկելի մասի նախապատրաստական, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ. օգոստոս:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամով իրականացվում են հետևյալ աշխատանքները

1. Ջերմուկ բնակավայրի Չախափնյակ թաղամասի Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցների վերանորոգում և բարեկարգում–679.2 մլն. դրամ
Աշխատանքների ավարտը՝ 2022թ. հոկտեմբեր:

2. Ջերմուկ բնակավայրի Շահումյան, Վարդանյան, Մյասնիկյան, Աղամյան և Չարենցի փողոցների վերանորոգում, և վերականգնում և <Քարայծ տանող ճեմուղու կառուցում> - 794.3 մլն. դրամ
Աշխատանքների ավարտը՝ 2022թ. օգոստոս:

Տարբեր ծրագրերով նախատեսված և կատարված աշխատանքներ
Ընդամենը՝ 8 373.5 մլն. դրամ

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմարիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2021թ. ընթացքում կազմվել և ներկայացվել է 2022–2024թթ. մարզային (տեղական) և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսական հայտը:

Աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և
ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյան

30.12.2021